



**Սոֆյա  
ՕՀԱՆՅԱՆ**

Փիլիսոփայական  
գիտությունների թեկնածու,  
դոցենտ

1997-2001 թթ. սովորել է ԵՊՀ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետի փիլիսոփայության մասնագիտության բակալավրի, 2001-2003 թթ.՝ մագիստրոսական, իսկ 2003-2007 թթ.՝ ԵՊՀ փիլիսոփայության պարմության ամբիոնի ասպիրանտական ծրագրերում: 2008 թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2010 թ.՝ դոցենտի գիտական կոչում:

2005 թ.-ից առայսօր աշխատում է ՀՊՏՀ հասարակագիտության ամբիոնում: 2016-2018 թթ. աշխատել է որպես ՀՊՏՀ «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի «Հանրային քաղաքականության և անվտանգության հեղափոխություններ» ծրագրի ավագ հեղափոխող:

Հեղինակ է մոտ 80 գիտական աշխատությունների և հոդվածների, ինչպես նաև համահեղինակ կոլեկտիվ մենագրությունների և դասախոսության տեքստի:

 ORCID - <https://orcid.org/0000-0002-5941-5150>

**ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ՝  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՆՈՐԱԳՈՒՅՆ  
ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ**

DOI: 10.52174/2579-2989\_2022.3-116

**Հիմնաբառեր.** *հիբրիդային պատերազմ, անկանոն պատերազմ, կոնֆլիկտ, մանիպուլյացիա, հիբրիդային սպառնալիքներ, ազգային անվտանգություն*

Վերջին ժամանակներում հայկական գիտական շրջանակներում հաճախակի է կիրառվում «հիբրիդային պատերազմ» հասկացությունը, ընդ որում, որոշ փորձագետներ հակված են 2020 թ. հայ-ադրբեջանական 44-օրյա պատերազմը համարելու հիբրիդային պատերազմի բաղկացուցիչ մաս: Թերևս, դա մոտ է իրականությանը, սակայն այս կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ-ի դեմ տարվող հիբրիդային գործողություններին դիմադրելու համալիր մոդելի արդյունավետ ձևավորումը հնարավոր կլինի, երբ հիբրիդային պատերազմի հայեցակարգը ոչ միայն ներառվի քաղաքական բանավեճում, այլև ստանա իրավական ձևակերպում (այսինքն՝ արտացոլվի նորմատիվ ակտերում): Իսկ այս հասկացության սահմանումն օրենսդրության մեջ կբացակայի այնքան ժամանակ, քանի դեռ գիտնականներն այդ երևույթի նկատմամբ չեն մշակել միասնական մոտեցում, չեն ձևակերպել դրա զարգացման հիմնական ուղղությունները: Հոդվածի նպատակն է «հիբրիդային պատերազմ» հասկացության ձևակերպումը, հիբրիդային գործողությունների՝ որպես կոնֆլիկտի (բախման) առանձին տեսակի վերլուծությունը, արդիականության ռազմական կոնֆլիկտների դասակարգման ընդլայնումը:

**XX** դարի երկրորդ կեսը և XXI դարի երկու տասնամյակներն էական փոփոխություններ մտցրին պատերազմի երևույթի իմաստավորման հարցում: Դա, առաջին հերթին, վերաբերում է միջազգային երևույթների հիբրիդացմանը և, այդ կապակցությամբ, տեղի ունեցողի հասկացման համար «ընդհանուր հայ-

տարարի» որոնմանը: Որոնումներից մեկը դարձավ հիբրիդային պատերազմի հանցակարգային նախադրյալների ձևավորումը:

Ներկայում պատերազմի տեսության շրջանակում ձևավորվել են պատկերացումներ պատերազմի սերունդների մասին<sup>1</sup>.

- առաջին սերունդ, որը զուգորդվում է ոչ մանկրային ճակատամարտերում հարթափող զենքի զանգվածային կիրառման հետ (նապոլեոնյան պատերազմներ),
- երկրորդ սերունդ, որը պայմանավորված է հրազենի առաջացմամբ և տրանսպորտային միջոցների օգնությամբ զորքերի տեղափոխման հնարավորություններով (Առաջին համաշխարհային պատերազմ),
- երրորդ սերունդ, որը կապված է ծանր զրահատանկային տեխնիկայի առաջացման հետ, ինչը թույլ տվեց իրականացնել մարտավարական և օպերատիվ մանևրներ (Երկրորդ համաշխարհային պատերազմ),
- չորրորդ սերնդի պատերազմներում առաջատար դեր են խաղում թափանցող տեխնիկական նորարարությունները (լազերային զինատեսակներ, էլեկտրամագնիսական թնդանոթներ և այլն), հեռակառավարվող սարքերն ու ռոբոտները, կապի, տեղեկատվության ու դիտարկման համակարգչային ցանցերը:

Առաջին երկու սերունդները համարվում են գծային պատերազմներ, քանի որ պայքարը վարվում է մարտական կարգերի (գծերի) ուղղակի բախմամբ, իսկ երրորդ սերնդից սկսած՝ խոսում են ոչ գծային պատերազմի մասին, որտեղ գերազանցության են հասնում մանևրելով, մարտավարական ու օպերատիվ վարպետությամբ, ինչպես նաև զանգվածային ոչնչացման զենքով:

Սակայն, անհրաժեշտ է ընդգծել, որ չորրորդ սերնդի պատերազմների դասակարգման ժամանակակից մոտեցումներ

ում դժվար է գտնել հիբրիդային պատերազմի՝ որպես հատուկ տեսակի հայեցակարգային վերլուծություն: Դա, ամենից առաջ, պայմանավորված է նրանով, որ գիտական աշխարհում գոյություն ունեն «հիբրիդային պատերազմ» եզրի՝ երբեմն արմատապես տարբերվող սահմանումներ. «հիբրիդային պատերազմ», «խառը պատերազմ», «չհամաձայնեցված պատերազմ», «քրեասահաբեկչական պատերազմ», «կարգավորվող քառսի պատերազմ», «ոչ գծային պատերազմ» և այլն:

«Հիբրիդային պատերազմ» եզրը սկզբնապես նշանակում էր զինված կոնֆլիկտների համալիր, որը ոչ ավանդական է, ոչ էլ անկանոն, քանի որ դրանում գործածվում են զինված ու չզինված պայքարի վարման ամենատարբեր ձևեր ու մեթոդներ: Ըստ Ջոն Մակքեյնի<sup>2</sup> հիբրիդային պատերազմը թշնամական գործողությունների տեսակ է, որի դեպքում հարձակվող կողմը չի դիմում ռազմական ներխուժման դասական եղանակին, այլ օգտագործում է հակառակորդին ճնշելու տարբեր ձևերի համադրություններ՝ քողարկված գործողություններ, դիվերսիաներ, կիբեռհարձակումներ, տեղեկատվական ներգործություն և այլն: Հիբրիդային պատերազմը ենթադրում է բարձր տեխնոլոգիական ինտելեկտուալ համակարգերի, ռադիոէլեկտրոնային, կիբեռնետիկական, տեղեկատվական-հոգեբանական միջոցների կիրառում: Ընդ որում, պայքարի մեջ են ներգրավվում նաև ոչ զինվորական անձինք ու կազմակերպություններ, որոնք հաճախ անտեսանելի են մնում<sup>3</sup>:

Հիբրիդային պատերազմների հանդեպ ուշադրությունը մեծացավ 2006 թ.՝ Իսրայելի և «Հեզբոլլահի» միջև Լիբանանյան երկրորդ պատերազմից հետո, երբ այդ եզրը մտավ ինչպես քաղաքագիտական, այնպես էլ ռազմագիտական շրջանառության մեջ: Այս հասկացությունը կոչված է արդիականացնելու և ընդլայնելու արդեն կայացած հասկացությունը՝ «անկանոն պատերազմը»՝ հարմարեցված նոր

<sup>1</sup> Տե՛ս Павелко И., Пацек П., Международная безопасность в контексте гибридной войны // Восток Европы / Гуманитарно-общественные исследования, 2019, N 5, 2, с. 147:

<sup>2</sup> Տե՛ս McCuen J. J. Hybrid wars // «Military Review» 88.2 (2008), p. 107:

<sup>3</sup> Տե՛ս Աղայան Ն., Կիբեռնապառնալիքները՝ ՀՀ ազգային անվտանգության նորագույն մարտահրավեր // «21-րդ դար», 2018, թիվ 5 (81), էջ 42:

պայմաններին: Իսկ «անկանոն պատերազմ» ԱՄՆ-ի հայեցակարգային փաստաթղթերում սահմանվում է որպես «ուժային պայքար պետության և ոչ պետական դերակատարների միջև լեգիտիմության և բնակչության վրա ներգործության համար: Այն նախապատվություն է տալիս անուղղակի և անհամաչափ գործողություններին, թեև կարող է ներառել ռազմական և այլ միջոցների լրիվ համակազմը՝ հակառակորդի իշխանությանը, ազդեցությանը և քաղաքական կամքին վնասելու նպատակով»<sup>4</sup>:

Ամերիկյան զինվորականների մի մասը կարծում է, որ «հիբրիդային պատերազմ» փոխարեն՝ նախընտրելի է գործածել «լրիվ սպեկտրի գործողությունների»՝ արդեն մշակված հայեցակարգը և համապատասխան եզրը: «Լրիվ սպեկտրի գործողությունների» (full spectrum operations) գաղափարն առաջադրվել է դեռևս 1990-ական թթ. վերջին՝ որպես ԱՄՆ-ի զինված ուժերի բարենորոգումների ուղղություններից մեկը, որը հետագայում ակտիվորեն առաջ էր մղում պաշտպանության նախարար Դ. Ռամսֆելդը: «Լրիվ սպեկտրը» ենթադրում է հետևյալ հատկանիշները.

- կանոնավոր ուժերի՝ տարբեր ծավալի գործողություններ վարելու ընդունակություն,
- ռազմական ու ոչ ռազմական գործիքների հավասարապես արդյունավետ օգտագործում,
- անկանխատեսելի սպառնալիքների դիմագրավման պատրաստականություն,
- յուրաքանչյուր հնարավոր հակառակորդի հանդեպ համալիր գերակայության հասնելու ընդունակություն:

Զինված ուժերն այսպիսի համընդհանուր գործառույթներ կարող են ստանալ ռազմական գործում ինֆորմատիկայի նվաճումների, գերճշգրիտ զենքի ներդրման պայմանով:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում 2014 թ. սեպտեմբերին ԱՄՆ-ի ցամաքային զորքերի հատուկ գործողությունների հրամանատարության հրատարակած «Սպիտակ գիրքը» (ոչ ավանդա-

կան պատերազմներին դիմագրավելու ձեռնարկ), որտեղ Ղրիմի շուրջ ծավալված իրադարձությունները դիտարկվում են ոչ ավանդական պատերազմների տեսանկյունից: Ըստ ամերիկացիների՝ ռուս զինվորականների գործողությունները Ղրիմում մերձավորարևելյան կոնֆլիկտներում ՀԱՄԱՍ-ի ու «Հեզբոլլահի» գծով Իրանի ներգրավման փորձի և 1990-ական թթ. ձևավորված «անսահմանափակ պատերազմի» չինական հայեցակարգի համադրություն են: Զինական հայեցակարգի էությունն այն է, որ պետք է գրոհել ճնշող գերազանցությամբ օժտված հակառակորդի խոցելի տեղերը՝ օգտագործելով ազգային անվտանգության համակարգում, կառավարությունում և հասարակությունում տարածայնությունները: Հարձակման գործիքակազմը սկզբունքորեն ոչնչով չի սահմանափակվում և ներառում է, օրինակ, հաքերային գրոհները, ֆինանսական համակարգում խնդիրների ստեղծումը, ահաբեկչության օգտագործումը, ԶԼՄ-ի միջոցով ներգործությունը, քաղաքային պայմաններում զինված պայքարը և այլն: «Սպիտակ գրքում» հիբրիդային պատերազմը սահմանվում է որպես «ավանդական, անկանոն ու անհամաչափ միջոցների համակցում քաղաքական ու գաղափարախոսական կոնֆլիկտների անդադար մանիպուլյացիայի համար»<sup>5</sup>:

Արևմտյան հեղինակների մեծամասնությունը և ուկրաինացի բոլոր փորձագետները վստահ են, որ 2014 թ. «կանաչ մարդուկների» կամ «քաղաքավարի մարդկանց» հայտնվելով սկսված և ներկայում զինված բախումների վերաճած ռուս-ուկրաինական հակամարտության շրջանակներում իրականացվող ռազմական գործողությունները թեև իրավաբանական տեսանկյունից դասակարգվում են որպես հակաահաբեկչական գործողություններ, սակայն և՛ քաղաքական ղեկավարության, և՛ լայն հասարակայնության, և՛ գիտական հանրության կողմից վաղուց ձևակերպվում են «պատերազմ» եզրով: Ընդ որում, այդ պատերազմը ստացել է «հիբրիդային» անվանումը<sup>6</sup>: Ի տարբերություն ուկրաին-

<sup>4</sup> Конашев В., Парфенов Р. Гибридные войны: между мифом и реальностью // "Мировая экономика и международные отношения". 2019, том 63, N 12, с. 57.

<sup>5</sup> Конашев В., Парфенов Р. Гибридные войны: между мифом и реальностью, с. 59.

նացիների, որոնք համարում են, որ ՌԴ-ն բռնակցել է Ղրիմը, ռուսները 2014 թ. իրադարձություններն անվանում են Ղրիմի վերամիավորում Ռուսաստանի հետ՝ նկատելով, այդուհանդերձ, որ «հիբրիդային պատերազմ» եզրը ստացել է ավելի լայն կիրառություն, քանզի հենց այդ հասկացությունն են գործածում Ռուսաստանի քաղաքական հակառակորդները Արևմուտքի հետ հարաբերությունների ընդհանուր վատթարացման պայմաններում<sup>7</sup>:

Ի տարբերություն ԱՄՆ-ի, որտեղ մասնագետները գլխավորապես մտահոգված են հակառակորդի կողմից հիբրիդային մեթոդների կիրառմամբ ամերիկյան զինված ուժերի համար ծագող ռիսկերով, ռուս զինվորականները հատուկ ուշադրություն են հատկացնում քաղաքականության հետ «գունավոր հեղափոխությունների» կապին: Նրանց կարծիքով՝ «գունավոր հեղափոխությունները» մարմնավորում են հիբրիդային պատերազմի քաղաքական նպատակներին հասնելու գլխավոր միջոցը՝ այլ պետություններում իշխանության ոչ բռնի փոփոխությունը: Ուստի հիբրիդային պատերազմի կարևորագույն բաղադրիչը տեղեկատվական ներգործությունն է: Հիբրիդային ներգործությունը հնարավորություն է տալիս իշխանության բերելու անհրաժեշտ քաղաքական խմբավորմանը՝ առանց անմիջական ուժային ազդեցության և տարածքի զավթման, միայն մանիպուլյացիայի միջոցների հաշվին<sup>8</sup>:

Գեռևս 2013 թ. ՌԴ ՁՈՒ-գլխավոր շտաբի պետ Վ. Գերասիմովն (որին արևմտյան փորձագետները համարում են հիբրիդային պատերազմների ռուս գլխավոր տեսաբանը) ընդգծել է, որ անհրաժեշտ է հասկանալ զինվորականների դերը փոփոխված պատերազմի պայմաններում, որտեղ կերպափոխվել են հակամարտության և ավանդական, և ոչ սովորական

ձևերը: Նա «Գիտության արժեքը կանխատեսման մեջ» հոդվածում ձևակերպել է պատերազմի նոր առանձնահատկությունները՝ չգործածելով «հիբրիդային պատերազմ» եզրը. «Հակամարտության օգտագործվող մեթոդների շեշտադրումը տեղափոխվում է քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, հումանիտար և բնակչության ընդլզող ներուժի կիրառմամբ իրականացվող այլ ոչ ռազմական եղանակների կողմը: Այդ ամենը լրացվում է ռազմական գաղտնի եղանակներով, այդ թվում՝ տեղեկատվական հակամարտության գործողությունների իրականացմամբ և հատուկ գործողությունների ուժերով: Միայն որոշակի փուլում են անցում կատարում ուժի բացահայտ կիրառմանը՝ հաճախ դա անվանելով խաղաղարար գործունեություն և ճգնաժամային կարգավորում»<sup>9</sup>:

Հայ որոշ հեղինակներ նույնպես, շեշտելով, որ ռազմական անմիջական ներխուժման դարաշրջանն անցել է, և ներխուժումները տեղի են ունենում խաղաղապահ ուժերի տեղակայման անվան տակ, որպես օրինակ բերում են 2016 թ. արցախադրբեջանական ապրիլյան պատերազմը, որի նպատակն էր ազգային կարևորության այնպիսի խնդիրների քննարկման երկրորդ պլան մղվելը, ինչպիսիք են բանակցային հետագա ռազմավարությունը, օլիգարխիայի կազմաքանդումը և տնտեսական զարգացման մոդելի ընտրությունը, ուժային կառույցների և դատարանների հիմնովին վերափոխումը, ի վերջո՝ արտաքին քաղաքական և ազգային անվտանգության նոր ռազմավարության քննարկումը<sup>10</sup>: Այդ ամենը հող նախապատրաստեց 2020 թ. 44-օրյա պատերազմի համար, երբ ռազմական գործողությունները հաջորդեցին ըստ էության մի քանի տարի առաջ սկսված հիբրիդա-

<sup>6</sup> Sten Andreievskiy T., Гибридная война: сущность и базовые стратегии // "De securitate", N 1 (3), 2017, с. 159:

<sup>7</sup> Sten Konashov B., Парфенов P. Гибридные войны: между мифом и реальностью, с. 56.

<sup>8</sup> Մանիպուլյացիայի մեթոդների ու հնարների մասին ավելի մանրամասն տես Օհանյան Ա., Հոգեբանական մանիպուլյացիա. ինչպես են «վճանում» ուղեղները, Եր., 2014, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն, [http://media.asue.am/upload/Sofya\\_verlucakan.pdf](http://media.asue.am/upload/Sofya_verlucakan.pdf), Օհանյան Ա., ՁԼՄ-ն որպես զանգվածային գիտակցության մանիպուլյացիայի գործոն, «Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ» ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր, Եր., «Տնտեսագետ», 2018, էջ 544-550, Օհանյան Ա., Մանիպուլյացիայի հնարների կիրառումը ժամանակակից մեդիայում, «Ամբերդ տեղեկագիր», 2022, N 1, էջ 103-109:

<sup>9</sup> Герасимов В. Ценность науки в предвидении // "Военно-промышленный курьер", 26.02.2013, <https://www.vpk-news.ru/articles/14632>.

<sup>10</sup> Sten Ghnragyan L., Հիբրիդային պատերազմն ու Հայաստանը, <https://www.civilnet.am/news/194115>.

յին պատերազմի ոչ ռազմական գործողություններին:

Ըստ էության, ժամանակակից ռազմական կոնֆլիկտների գլխավոր առանձնահատկությունն է քաղաքական նպատակներին հասնելու ձգտումը՝ հակառակորդի ուղղությամբ նվազագույն բացահայտ զինված ներգործությամբ: Մյուս տարբերակիչ գծերից են պատերազմի ձևական հայտարարման բացակայությունը և քիչ կանխատեսելի հեռավոր հետևանքները, քանի որ հասարակությունը հնարավորինս ապակայունացվում և ապակազմակերպվում է կյանքի բոլոր բնագավառներում:

Հիբրիդային պատերազմին նախորդում է բավական երկարատև ու համալիր նախապատրաստություն, ուստի դրան նախորդում են հիբրիդային սպառնալիքները, որոնք, ըստ էության, մարտահրավերներ են պետության համար: Այդ սպառնալիքներից են ապագա ագրեսորին համակրող քաղաքական ու հասարակական շարժումների ստեղծումը, բարենպաստ տեղեկատվական դաշտի կարգավորումը, քարոզչությունը, ագրեսորի կողմից սեփական պատմական, մշակութային, գաղափարախոսական արժեքների պարտադրումը:

Ավելի որոշակի նկարագրելու դեպքում հիբրիդային գործողություններում շեշտադրվում է պետության ներքին արագ

ապակայունացումը՝ ռազմական և տնտեսական ներուժի քայքայման, բնակչության առավելագույն մեծ ընդգրկմամբ տեղեկատվական-հոգեբանական լայն գործողությունների, ներքին ընդդիմության ու բազմազան ծայրահեղական կազմակերպությունների միջոցով, ինչպես նաև ապստամբական, դիվերսիոն և ահաբեկչական պայքարի մեթոդների օգտագործմամբ:

Ազգային անվտանգության տեսանկյունից, հիբրիդային սպառնալիքների հանդեպ խոցելիությունների համակարգային նույնականացումը պետք է դառնա հիմնական առաջնայնություն: Այդպիսի խոցելի տարրերի թվին կարող են դասվել հասարակության մարզինալացված խմբերը, որոնք կարող են դառնալ իրենց արմատականացմանը կամ գաղափարախոսական հավաքագրմանն ուղղված գործողությունների օբյեկտներ, իսկ համապատասխան քաղաքական ճնշման դեպքում՝ վերածվել հիբրիդային պատերազմի միջոցների<sup>11</sup>: Ուստի պետությունը պետք է լուրջ ներդրումներ կատարի հետախուզական տվյալների հավաքագրման ու վերլուծության, անվտանգային վիճակի կանխատեսման ոլորտներում: Հիբրիդային սպառնալիքների դեմ ուղղված գործունեության մյուս ուղղվածությունը պետք է լինի կոնֆլիկտային իրավիճակի վաղ հայտնաբերումն ու գնահատումը:

<sup>11</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Гигерих Б. Гибридная война и изменяющийся характер конфликта // "Connections: The Quarterly Journal" 15, N 2 (2016), с. 75-83:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Ն., Կիբեռսպառնալիքները՝ ՀՀ ազգային անվտանգության նորագույն մարտահրավեր // «21-րդ դար», 2018, թիվ 5 (81), էջ 38-45:
2. Գևորգյան Լ., Հիբրիդային պատերազմն ու Հայաստանը, <https://www.civilnet.am/news/194115>
3. Օհանյան Ա., ՋԼՄ-ն որպես զանգվածային գիտակցության մանիպուլյացիայի գործոն, «Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ» ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր, Եր., «Տնտեսագետ», 2018, էջ 544-550:
4. Օհանյան Ա., Հոգեբանական մանիպուլյացիա. ինչպես են «վանում» ուղեղները, Եր., 2014, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն, [http://media.asue.am/upload/Sofya\\_verlucakan.pdf](http://media.asue.am/upload/Sofya_verlucakan.pdf)
5. Օհանյան Ա., Մանիպուլյացիայի հնարների կիրառումը ժամանակակից մեդիայում, «Ամբերդ» տեղեկագիր, 2022, N 1, էջ 103-109:
6. Андриевский Т., Гибридная война: сущность и базовые стратегии // "De securitate", N 1 (3), 2017, с. 158-166.

7. Герасимов В. Ценность науки в предвидении // “Военно-промышленный курьер”, 26.02.2013, <https://www.vpk-news.ru/articles/14632>
8. Гиегерих Б. Гибридная война и изменяющийся характер конфликта // “Connections: The Quarterly Journal” 15, N 2 (2016), с. 75-83.
9. Конашев В., Парфенов Р. Гибридные войны: между мифом и реальностью // “Мировая экономика и международные отношения”. 2019, том 63, N 12, с. 56-66.
10. Павелко И., Пацек П. Международная безопасность в контексте гибридной войны // Восток Европы / Гуманитарно-общественные исследования, 2019, N 5, 2, с. 145-156.
11. Черноперов В., Сулейманова У. Гибридная война: предпосылки появления, концепции, сущность, цели, инструментарий, правовые вопросы, риски // “Ноосферные исследования”, 2021. Вып. 3, с. 33-46.
12. McCuen J. J. Hybrid wars // «Military Review» 88.2 (2008), p. 107.

**Софья ОГАНЯН**

*Кандидат философских наук,  
доцент кафедры общественных наук, АГЭУ*

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

### **ГИБРИДНЫЕ ВОЙНЫ – НОВЕЙШИЕ УГРОЗЫ БЕЗОПАСНОСТИ**

В последнее время в армянских научных кругах часто употребляется понятие «гибридная война», причём некоторые эксперты склонны считать армяно-азербайджанскую 44-дневную войну 2020 года составной частью гибридной войны. Возможно, это близко к реальности, однако в этой связи нужно отметить, что эффективно сформировать комплексную модель противодействия гибридным действиям против РА станет возможным, когда концепция гибридной войны не только будет введена в политический дискурс, но и получит юридическое оформление (то есть, будет отражена в нормативных актах). А определения этого понятия не будет в законодательстве до тех пор, пока учёные не разработают общий подход к этому феномену, не сформируют основные направления развития. Цель статьи – дать определение понятия «гибридная война», проанализировать гибридные действия как отдельный вид конфликта, расширить классификацию военных конфликтов современности.

**Ключевые слова:** *гибридная война, нерегулярная война, конфликт, манипуляция, гибридные угрозы, национальная безопасность*

**Sofya OHANYAN**

*PhD in Philosophical Sciences,  
Associate Professor of the Chair of Social Sciences, ASUE*

SECURITY AND CHALLENGES

### **HYBRID WARFARES: THE LATEST SECURITY THREATS**

Recently, the concept of “hybrid warfare” has often been used in Armenian scientific fields, and some experts tend to consider the 44-day Armenian-Azerbaijan war of 2020 to be an integral part of hybrid warfare. Perhaps, this is close to reality; however, in this regard, it should be noted that the effective formation of a comprehensive model of resistance to hybrid actions against Armenia will be possible when the concept of “hybrid warfare” is not only included in the political discussion, but also it receives legal formulation (i.e., it will be reflected in the regulations). Meanwhile, in the legislation of Armenia (in particular, in the military doctrine of the Republic of Armenia), there is no definition of the concept of “hybrid warfare”. However, unless scientists develop a unified approach to this phenomenon and formulate the main directions of its development, there will be no definition of this concept in legislation. The purpose of the paper is to formulate the concept of “hybrid warfare”, to analyze hybrid actions as a separate type of conflict, and to expand the classification of modern military conflicts.

**Keywords:** *hybrid warfare, irregular warfare, conflict, manipulation, hybrid threats, national security*